ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՁԱՐՈՒՅԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 33 - 34 (16734) ՈՒՐԲԱԹ 26 ԱՊՐԻԼԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՀԵՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՎ ԵՆՔ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ՍԵՐՏ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅԻՆ»

Ապրիլի 24-ին, Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանում, բացվեց Եվրոպայի ակադեմիայի Թբիլիսիի տարածաշրջանային կենտրոնը:

Միջոցառման շրջանակներում, Եվրոպայի ակադեմիայի Թբիլիսիի տարածաշրջանային կենտրոնի հիմնադրման վերաբերյալ, Թբիլիսիի պետական համալսարանի եւ Եվրոպայի ակադեմիայի միջեւ ձեւակերպվել է փոխհամագործակցության հուշագիր: Փաստաթուղթը ստորագրել են համալսարանի ռեկտոր, Գիա Շարվաշիձեն եւ Եվրոպայի ակադեմիայի նախագահ Սիրդ Քլոեթինգը:

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, ելույթ ունենալով կենտրոնի բացման արարողությանը, նշեց, որ կրթությունը կարճ ճանապարհ է ազատության եւ Վրաստանի առջեւ գոյություն ունեցող բոլոր մարտահրավերները

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՒՄ ԿԿԱՏԱՐՎԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Վրաստանի արդարադատության նախարարը հանդիպում ունեցավ եվրահանձնաժողովի ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության գլխավոր տնօրինության ղեկավարի տեղակալի հետ:

Թեա Ծուլուկիանին Սիմոն Մորդուի հետ զրուցել է այցեգրերի ազատականացման գործընթացի պահպանման մասին եւ լրատվություն փոխանցել, թե ինչ է անում Վրաստանի կառավարությունը անօրեն ներգաղթը նվազեցնելու նպատակով:

Ինչպես նշեց արդարադատության նախարարը, հանդիպումը կարեւոր էր Եվրոպայի հետ անայցեգրային ռեժիմի պահպանման տեսանկյունից:

Թեա Ծուլուկիանու հայտարարությամբ, Եվրամիության երկրների հետ անայցեգրային անցուդարձը պահպանելու համար, որը երկրի համար շատ կարեւոր է, արդեն իրականացվել են օրենսդրական փոփոխություններ:

ՍՈՒՐԲ ՁԱՏԻԿ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԵՑ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Ապրիլի 20-ին, Ավագ շաբաթ օրվա երեկոյան, Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի՝ Սուրբ Զատկի առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Վիրահայոց թեմին:

Ուղերձում, մասնավորապես, ասված է.

«Փրկչի Սուրբ Հարության տոնի առիթով Հայրապետական մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Զատկական այս լուսապայծառ առավոտ Մեր աղոթքն ու մաղթանքն է՝ Հարուցյալ Փրկիչը հոգենորոգ իր շնորհներով զորացնի հավատավոր մեր զավակներին՝ պարգեւելով քաջառողջություն, նորանոր ձեռքբերումներ եւ ամենայն բարիք՝ ի պայծառություն տիրախնամ Վիրահայոց թեմի եւ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԼ Ի ՄԵՌԵԼՈՑ:
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ապրիլի 21-ին Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնը՝ Սուրբ Զատկի օրը Թբիլիսիում, Ռուսթավիում, Բաթումիում, Սամցխե-Ջավախեթիում, Մառնեուլիի, Ծալկայի եւ Թեթրիծղարոյի մունիցիպալիտետներում, հավատացյալ բազմության մասնակցությամբ, տեղի ունեցան սրբազան արարողություններ:

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով, Սուրբ եւ Անմահ պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 24-Ը՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ՄՈՏ

Ապրիլի 24-ին Հայաստանը, համայն հայությունը նշեց Հայոց Մեծ եղեռնի 104-րդ տարելիցը:

Այդ օրը Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԲԵՐԵՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 24-ին՝ Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում, Բաթումիում, Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի տարածաշրջանների հայաբնակ շրջաններում անցկացվեցին միջոցառումներ՝ նվիրված Հայոց Ցեղասպանության 104-րդ տարելիցին:

Թբիլիսիում Հայոց Ցեղասպանության միջոցառումները մեկնարկեցին Վրաստանի մայրաքաղաքի Սուրբ էջմիածին եկեղեցուց: Տաճարի բակում տեղադրված Ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարին ծաղիկներ խոնարհվեցին, մատուցվեց Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող պատարագ:

Ապա հավաքվածները՝ Ցեղասհանության ճանաչման եւ հատուցման արդարացի պահանջներով, ուղեւորվեցին դեպի Վրաստանում Թուրքիայի դեսպանություն:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓ. «ՄԵՆՔ ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՔԻՆ»

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարություն է տարածել Հայոց Ցեղասպանության 104-րդ տարելիցի կապակցությամբ՝ օգտագործելով «Մեծ եղեռն» եզրույթը:

«Այսօր մենք ոգեկոչում ենք Մեծ Եղեռնը եւ բոլոր նրանց հիշատակը, ովքեր տառապել են 20-րդ դարի ամենասարսափելի զանգվածային կոտորածների պատճառով: 1915 թվականից սկսած՝ Օսմանյան կայսրության վերջին տարիներին մեկ ու կես միլիոն հայեր աքսորվեցին, սպանվեցին կամ մահվան երթի դուրս եկան: Հիշատակի այս օրը մենք կրկին միանում ենք Ամերիկայի ու ողջ աշխարհի հայ համայնքին՝ սգալով բոլոր նրանց համար, ովքեր կորցրեցին իրենց կյանքը:

Այս օրը մենք նաեւ հիշում ու ճանաչում ենք բոլոր նրանց աշխատանքը, ովքեր փորձեցին վերջ տալ բռնությանը, ինչպես նաեւ նրանց, ովքեր ձգտեցին վստահեցնելու, որ նմանօրինակ կոտորածներն այլեւս երբեք չեն կրկնվելու, ինչպես իրավապաշտպան եւ իրավաբան Ռաֆայել Լեմկինը: Մենք հիշում ենք նպաստներն այն մեծահոգի ամերիկացիների, ովքեր օգնեցին փրկելու կյանքեր եւ վերակառուցելու հայկական համայնքները: Հիշելով բոլոր նրանց, ովքեր տառապեցին, մենք նաեւ ոգեշնչվում ենք այն քաջ եւ տոկուն հայերից, ովքեր ի հեճուկս հսկայական դժվարությունների, կառուցեցին առույգ համայնքներ ողջ աշխարհում, այդ թվում եւ Միացյալ Նահանգներում:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՀԵՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՎ ԵՆՔ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ՍԵՐՏ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հաղթահարելու ճանապարհին:

Նա շնորհակալություն հայտնեց բոլորին, ով մասնակցել է կենտրոնի բացման գործին:

Վարչապետը խոսել է կրթության ոլորտի բարեփոխման եւ ֆինանսավորման մասին:

- Մենք հպարտանում ենք մեր պատմությամբ, մեր մեծ նախկինով, որն այսօր կանգնած է հենց կրթության եւ մշակույթի վրա: Ունենք ազգային միտք, որը կոչվում է կրթություն: Կրթությունը կարճ ճանապարհ է ազատության եւ նրա կողմ, որ հաղթահարենք Վրաստանի առջեւ գոյություն ունեցող բոլոր մարտահրավերները: Այս ազգային մտքի համաձայն, վերցրել ենք պատասխանատվություն, որ Վրաստանը ապագա տասնամյակների ընթացքում իրականացնի իր ամբողջ ներքին արտադրանքի 6 տոկոսի ներդրումը հենց կրթության մեջ, որը փաստորեն, բյուջեի մեկ չորրորդն է,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Նրա խոսքով, կրթության համակարգի հինգ փուլ ընդգրկող բարեփոխման մեջ, գիտությունը ունի իր առանձնահատուկ դերը:

Վարչապետի հավաստմամբ, եվրոպական ընտանիք վերադառնալը միայն քաղաքական ընտրություն չէ: Նրա գնահատմամբ, կենտրոնի բացումը աջակցելու է վրացի եւ եվրոպացի գիտնականների համագործակցությանը:

ՍՈՒՐԲ ՁԱՏԻԿ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Պատարագին ներկա էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Սուրբ Հարության տոնակատարությունը հարգել էին Վրաստանի հաշտության եւ հավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, առաջին փոխպետնախարար Լիա Գիգաուրին, Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն, Վրաստանի խորհրդարանի անդամներ Դավիթ Ճիճինաձեն, Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի կառավարության վարչակազմի աշխատակից Կարեն Եղիազարյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրյանը, Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, ուրիշներ:

Հընթացս Սուրբ պատարագի՝ պատարագիչ Սրբազան հայրը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի Զատկական պատգամը:

Եկեղեցու բակում ազգային տարազով զուգված երիտասարդները ժողովրդին բաժանեցին ներկած ձվեր:

Երկուշաբթի օրը, Սուրբ պատարագից հետո, ի Հիշատակ մեռելոց, կատարվեց հոգեհանգստյան կարգ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՄԻՐՅԱՆԸ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՎ ԾԱԼԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Վիրահայոց թեմում ծառայության կոչված Մայր Աթոռի միաբան Տեր Մաղաքիա վարդապետ Ամիրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հրամանով, նշանակվել է Սամցխե-Ջավախքի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ, կեցավայրը՝ Ախալքալաքի քաղաք: 39-ամյա Մաղաքիա վարդապետ Ամիրյանը (ավազանի անունը՝ Հայկ) սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Այն ավարտելուց հետո, ձեռնադրվել է Մայր տաճարում՝ իբրեւ լուսարար: Ապա ծառայության է կոչվել Խոր Վիրապի վանքում՝ իբրեւ վանահոր օգնական: Եղել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ավագ վերակացու, այնուհետեւ՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ: Ապա ծառայության է կոչվել Արգենտինայի Հայոց թեմում՝ իբրեւ առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր հովիվ: Արգենտինայում ծառայության ընթացքին՝ Բուենոս-Այրեսի պետական համալսարանում ուսանել է իսպաներեն, այնուհետեւ Բուենոս-Այրեսի Պապական համալսարանում շուրջ 2 տարի ուսանել է Աստվածաբանություն: Տիրապետում է հայերենին, ռուսերենին, անգլերենին եւ իսպաներենին:

ՋԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱՋԻՉՅԱՆԸ՝ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՎ ԱՂՔՅՈՐՓԻԻ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր սպասավորի պարտականություններից ազատված, Վիրահայոց թեմում ծառայության կոչված, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, 38-ամյա Զավեն վարդապետ Յազիչյանը թեմական առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հրամանով նշանակվել է Վիրահայոց թեմի Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյանի եւ Ախքյորփիի հովվությունների հոգեւոր հովիվ, կեցավայրը՝ Կարմիր գյուղ: Նշված հովվությունների մեջ ընդգրկված են Մառնեուլիի մունիցիպալիտետի բոլոր հայաբնակ գյուղերը: Զավեն վարդապետ Յազիչյանը (ավազանի անունը՝ Սարգիս) սովորել է Սեւանի Վազգենյան Հոգեւոր դպրանոցում, Գեւորգյան Հոգեւոր ճեմարանում, ԱՄՆ-ի Պրոֆեսիոնալ խորհրդատվական հոգեբանություն Միննեսոտայի Սուրբ Թովմաս կաթոլիկ համալսարանում, ծառայություն է մատուցել Ամերիկայի հայոց Արեւելյան թեմում: Ապա վերադարձել եւ ստանձնել Սյունյաց թեմի փոխառաջնորդի, առաջին առաջնորդական տեղապահի Սյունյաց նորաբաց թեմի, Մայր Աթոռի Կադրերի բաժնի տնօրենի պաշտոնը: Այնուհետեւ նշանակվել է Սուրբ Գայանե վանքի վանահայր, որից հետո ստանձնել Հնդկաստանի Հայոց մարդասիրական ճեմարանի տեսչի եւ հնդկահայոց հոգեւոր հովվի պաշտոնը: Եղել է Սինգապուրի, Մյանմայի, Բանգլադեշի, Եգիպտոսի եւ Հեռավոր Արեւելքի հոգեւոր հովիվ: Վերադառնալուց հետո, ծառայության է կոչվել Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի՝ որպես հոգեւոր փոխտեսուչ:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՕՐԱԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՏԻԳՐԱՆ ՖԱՐՄԱՆՅԱՆԸ

Երկարատեւ եւ ծանր հիվանդությունից հետո, ապրիլի 24-ին, 66 տարեկան հասակում, վախճանվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի երկարամյա գլխավոր խմբագիր, ՀՀ վաստակավոր լրագրող Տիգրան Ֆարմանյանը:



Տիգրան Ֆարմանյանը ծնվել է 1953թ. մայիսի 16-ին Վրաստանի Ասպինձայի շրջանի Դամալա գյուղում, ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1976թ.՝ որպես թղթակից աշխատելով «Երեկոյան Երեւան» թերթում: 1995-2001 թթ. եղել է «02» շաբաթաթերթի գլխավոր խմբագիրը, 2001թ.՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիրը:

2007 թվականին արժանացել է Հայաստանի Վաստակավոր ժուռնալիստի կոչման, պարգեւատրվել գերատեսչական մի շարք պարգեւներով, շնորհակալագրով:

«Վրաստան» թերթի աշխատակազմը խոր վշտով սգում է «Հայաստանի Հանրապետություն» պաբերականի երկարամյա գլխավոր խմբագրի, իր գործի հմուտ գիտակի, լավ ընկերոջ անժամանակ մահը եւ ցավակցում նրա ընտանիքին, հարազատներին ու գործընկերներին:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՐԴՅՈՒՆՔ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

Ապրիլի 21-ին Ուկրաինայում անցկացվեց նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Ուկրաինայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, ընդդիմության թեկնածու Վլադիմիր Զելենսկին ստացել է ընտրողների 73,18 տոկոսի աջակցությունը: Երկրի գործող նախագահ Պյոտր Պորոշենկոյին աջակցություն է հայտնել ընտրողների միայն 24,49 տոկոսը:

Զելենսկու արձանագրած արդյունքը կարելի է աննախադեպ համարել Ուկրաինայի պատմության մեջ. դեռ երբեք ոչ մի նախագահ չի ստացել երկրի քաղաքացիների նման բարձր վստահություն:

Վլադիմիր Զելենսկին հաղթել է Ուկրաինայի բոլոր տարածաշրջաններում, բացի Լվովի մարզից: Նախագահական մրցավազքի առաջատարն ամենամեծ աջակցությունն ստացել է Օդեսայի մարզում, Դնեպրոպետրովսկի, Զապորոժիեի, Խարկովի եւ Լուգանսկի մարզերում: Կիեւում Զելենսկու օգտին քվեարկել է ընտրողների 60,25 տոկոսը: Նորընտիր նախագահի պաշտոնակալման արարողությունը պետք է տեղի ունենա մայիսի 31-ից ոչ ուշ:

ԱՄՆ

ՎԵՐՋՆԱԳԻՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

ԱՄՆ-ը պատժամիջոցներ կկիրառի Թուրքիայի նկատմամբ, եթե Անկարան չհրաժարվի ռուսական S-400 համալիրը գնելու գործարքից:

Նշվում է, որ Վաշինգտոնը կարող է իր ռազմական բազաները Թուրքիայից տեղափոխել Հունաստան: Բացառվում է նաեւ Թուրքիային 5-րդ սերնդի F-35 ինքնաթիռների մատակարարումը:

Նշենք, որ ապրիլի 10-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել էր, որ S-400 համալիրը գնելը որոշված հարց է, եւ երկիրը այն կստանա 2019 թվականի հուլիսին:

ՇՐԻ ԼԱՆԿԱ

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԵԾԱԹԻՎ ԶՈՀԵՐՈՎ

Շրի Լանկայում ապրիլի 21-ին իրականացված մի շարք պայթյունների հետեւանքով զոհվածների թիվը հասել է 321-ի, վիրավորների թիվը՝ շուրջ 500-ի: Ապրիլի 21-ին մի շարք պայթյուններ են որոտացել եկեղեցիներում Զատկի արարողությունների ժամանակ, հյուրանոցներում, ինչպես նաեւ մայրաքաղաքի կենդանաբանական այգու մոտ:

Վերջին տվյալներով, զոհվածների թվում եղել են Դանիայի, Ճապոնիայի, Պակիստանի, Մարոկկոյի, Հնդկաստանի, Բանգլադեշի, ՉԺՀ-ի, Նիդերլանդների, ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Մեծ Բրիտանիայի քաղաքացիներ:

Շրի Լանկայի իշխանություններն ապրիլի 22-ին, ահաբեկչական գործողություններով պայմանավորված գործի շրջանակում, ձերբակալել են 29 անձ: Ահաբեկչության համար պատասխանատվությունը ստանձնել է Իսլամական պետություն կազմակերպությունը:

ՖԻԼԻՊԻՆՆԵՐ

ՈՒԺԳԻՆ ԵՐԿՐԱՇԱՐԺ. ԿԱՆ ԶՈՀԵՐ

Ապրիլի 23-ին 6,6 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Ֆիլիպիններում, Սեբու քաղաքից 226,1 կմ հարավ-արեւմուտք ընկած շրջանում: Նախօրեին 6,3 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայից ոչ հեռու, որի հետեւանքով, ըստ վերջին տվյալների, զոհվել է 15 մարդ:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՆՇԱՆԱԿԵՏՈՒՄ ԵՆ

- Այսօր Վրաստան-ԱՄՆ հարաբերությունները ամենաբարձր նշանակետում են, եւ մենք հպարտանում ենք դրանով,- այս մասին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հայտարարել է Ամերիկայի Միացյալ Նահանգների «Ուսս Ռոսս» (USS Ross) նավի վրա հյուրընկալվելիս, որը գտնվում է Բաթումիի նավահանգստում:

Մամուկա Բախտաձեին հյուրընկալել են Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանի պարտականությունները կատարող Ռոս Ուիլսոնը եւ նավապետ Դեւիդ Կոուլսը: Վարչապետը դիտել է նավը եւ տեղեկացել նրա հնարավորությունների մասին:

Մամուկա Բախտաձեի հայտարարությամբ, ամերիկյան նավի այցը մեկ անգամ եւս ընդգծում է Վրաստանի հանդեպ Ամերիկայի Միացյալ Նահանգների աջակցությունը, որը մեծ գնահատանքի է արժանանում վրացիների կողմից:

Ամերիկայի Միացյալ Նահանգների նավը Բաթումիի նավահանգիստ է մտել ապրիլի 21-ին:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԻԽԵԻԼ ԲԱՏԻԱՇՎԻԼԻ. «ԱՐԵՎՄՏՅԱՆ ՉԱՓԱՆԻՇԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ է 7 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ»

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլու հայտարարությամբ, Վրաստանի մասշտաբով դպրոցների ենթակառուցվածքը արեւմտյան չափանիշին համապատասխանեցնելու համար, անհրաժեշտ է առնվազն 7 միլիարդ լարի:

- Տարիների ընթացքում կուտակված խնդիրներ կան բոլոր ուղղություններով: Որպեսզի Վրաստանի մասշտաբով դպրոցների ենթակառուցվածքը լինի արեւմտյան չափանիշին համապատասխան, առնվազն 7 միլիարդ լարի է անհրաժեշտ: Ինչ վերաբերում է միայն տեխնիկական խնդրին, դրանից բացի, անհրաժեշտ է լուծել մանկավարժների նյութական վիճակը: Եթե դրա մասին հոգ չտանենք, շատ բարդ կլինի մեր առջեւ ծառացած խնդիրները լուծել,- ընդգծեց Միխեիլ Բատիաշվիլին:

Նախարարի մեկնաբանմամբ, կարեւոր խնդիրների թվում է նախադպրոցական կրթությունը, համալսարանների որակը եւ շրջաններում մասնագիտական ուսումնարանների մատչելիությունը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ԿԱՐՄՐՈՒԿԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԿԱՐՈՂ է ԿԱՆԳՆԵՑՆԵԼ ՄԻԱՅՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ»

Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն երկրի բնակչությանը կոչ է արել, Իմունացման համաշխարհային շաբաթի շրջանակներում, կարմրուկի դեմ պատվաստում ստանալ:

Ինչպես նշեց առողջապահության նախարարը, պաշտոնական տվյալների համաձայն, 2019 թվականի հունվարից մինչեւ ապրիլ Վրաստանում գրանցվել է կարմրուկով հիվանդանալու 3 հազար 172 դեպք: Այդ ցուցանիշը գերազանցում է անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանում վարակվածների թվական տվյալները: Նորման համարվում է տարվա ընթացքում կարմրուկով հիվանդանալու 10 դեպքը: Նախարարի հավաստմամբ, կարմրուկի համաճարակը Վրաստանում կարող է կանգնեցնել միայն համատարած պատվաստումը:

Դավիթ Սերգեենկոյի խոսքով, պատվաստումներ ստացել են արդեն Վրաստանի 120 հազար բնակիչներ, սակայն դա բավարար չէ: Նա հայտարարել է, որ այս տարի կարմրուկի դեմ պատվաստման գծով առողջապահության նախարարության նպատակը պատվաստվողների թիվը 300 հազարի հասցնելն է:

Իմունացման համաշխարհային շաբաթը նշվում է ամեն տարի, ապրիլի վերջին շաբաթվա ընթացքում: Այն ուղղված է ցանկացած տարիքում մարդկանց հիվանդություններից պաշտպանության համար պատվաստանյութերի օգտագործումը խրախուսելուն:



ՁԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԵՐԻՆ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԱՆՎՃԱՐ

Ձատկական տոների կապակցությամբ, Թբիլիսիի կառավարության որոշմամբ, ապրիլի 27-ի ժամը 23:00-ից մինչեւ ապրիլի 28-ի 04:00-ն մետրոն աշխատելու է անվճար,- այս մասին հայտարարեց տրանսպորտի քաղաքային ծառայության ղեկավար Մամուկա Մումլաձեն:

Ինչպես նշել է Մումլաձեն, Ձատկական տոների պատճառով մշակվել է ավտոբուսների 8 հավելյալ ուղի, որոնք տեղաշարժվելու են մետրոներից դեպի գերեզմանատներ:

- Այս մետրոկայաններն են՝ Վարկեթիլին, Դիդուբեն, Կայարանի հրապարակը, Մարջանիշվիլին եւ Սարաջիշվիլին: Դրա հետ մեկտեղ, «Աֆրիկա» թաղամասի հարակից տարածքներից ավտոբուսները ուղեւորվելու են դեպի գերեզմանատներ: Ընդհանուր առմամբ, 8 ուղի է: Ապրիլի 28-ի ժամը 20:00-ից աշխատելու է 60 միավոր ավտոբուս իսկ ապրիլի 29-ին 80 միավոր: Ապրիլի 28-29-ին երթեւեկությունը լինելու է անվճար,- հայտարարել է Մումլաձեն:

ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ինչպես հայտարարեց կենսաթոշակային գործակալության տնօրեն Լեւան Սուրգուլաձեին, Վրաստանում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումից 100 օր է անցել, եւ այդ ժամանակահատվածում կուտակային կենսաթոշակային համակարգին անդամագրվել էր ավելի քան 750 000 մարդ: Նրա խոսքով, ներկա պահին, առկա տեղեկատվության համաձայն, թոշակային վճարների ծավալը կազմում է 175 մլն լարի:

- Համակարգից դուրս գալու ցանկություն ունեցողների թիվն այնքան էլ մեծ չէ: Համակարգից այս պահին դուրս է եկել 2 900 մարդ: Սա 750 000 մարդու հաշվով ընդամենը 0,4 տոկոսն է,- նշեց Լեւան Սուրգուլաձեն:

ՄԻՋԱԴԵՊ

«ԵՐԲԵՔ ՉԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՆԱԽԱԳԻԾ, ՈՐ ՉԼԻՆԵՐ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ»

Ապրիլի 21-ին Ախմետայի մունիցիպալիտետում, Ալազանի գետի վրա փոքր հիդրոէլեկտրակայանի շինարարության մեկնարկը բողոքարկվեց Պանկիսիի կիրճի Բիրկիանի գյուղի բնակիչների կողմից: Տեղացիները վախենում են, որ հիդրոէլեկտրակայանի շինարարությունը բացասաբար կանդրադառնա շրջակա միջավայրի վրա, եւ նրանք ստիպված կլինեն լքել իրենց տները: Միեւնույն ժամանակ, իշխանությունները հայտարարեցին, որ 5 մ/վտ հզորությամբ ՀԷԿ-ը չի կարող վտանգ ներկայացնել տեղի բնակիչների համար:

Ապրիլի 21-ին, Բիրկիանիում տեղի ունեցած բողոքի ցույցի ընթացքում, իրավիճակը մի քանի անգամ սրվեց: Ցուցարարների եւ ոստիկանության միջեւ մի քանի բախում տեղի ունեցավ:

Ցուցարարները ոստիկանների ուղղությամբ փայտեր ու քարեր են նետել: Ի պատասխան, հատուկ ուժերը մի քանի անգամ օգտագործել են արցունքաբեր գազ եւ ռետինե փամփուշտներ:

ՆԳՆ տվյալներով, ընդհարումների հետեւանքով, վիրավորվել է 55 մարդ՝ 38 ոստիկան եւ 17 տեղացի բնակիչ: 23 ոստիկան մնում է Թելավի քաղաքի հիվանդանոցում:

Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիան Պանկիսիի կիրճի բնակիչներին կոչ արեց հանգստություն պահպանել, եւ հայտարարեց, որ ՀԷԿ-ի կառուցումը կսկսվի միայն բնակչության 90% -ի համաձայնության դեպքում:

- Մենք որոշում ենք կայացրել, որ ՀԷԿ-ը կառուցվի միայն բնակչության 90% -ի համաձայնության դեպքում,- ասաց Գիորգի Գախարիան ցուցարարների հետ հանդիպումից հետո, որին ներկա էին նաեւ բնապահպանության նախարար Լեւան Դավիթաշվիլին եւ տարածքային զարգացման նախարար Մայա Ցքիտիշվիլին:

Գախարիան ընդգծեց, որ ՀԷԿ-երի թեմայի քննարկումը տեղի բնակչության հետ կշարունակի այն ընկերությունը, որն իրականացնելու է բոլոր աշխատանքները:

Միեւնույն ժամանակ, նա նշել է, որ ոստիկանների վրա հարձակվողները կպատժվեն: Դրա հետ մեկտեղ, Գախարիայի խոսքով, հատուկ ուժերը դուրս կգան կիրճից:

Պանկիսիի կիրճի միջադեպի կապակցությամբ իր մտահոգությունը հայտնեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն՝ հայտարարելով, որ երկրում իրականացվելիք բոլոր նախագծերի հարցով տեղի բնակիչների կարծիքը անվերապահորեն հաշվի կառնվի:

- Առանձնահատուկ հարգանքով ցանկանում եմ դիմել Պանկիսիի կիրճի բնակիչներին: Մենք երբեք ո'չ մի տարածաշրջանում, ո'չ մի բնակավայրում կամ գյուղում ոչ մի նախագիծ չենք իրականացրել առանց քաղաքացիների հետ կոնսուլտացիաների եւ երկխոսության: Դա մեր իշխանության ձեռագիրն է: Եվ դուք գիտեք, որ այդ երկխոսությունը շարունակվում է,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն ու հավելեց,- ագրեսիան մեր իրավապահների նկատմամբ բացարձակապես անհանդուրժելի է եւ, ելնելով դրանից, պատասխանն օրենքի շրջանակներում կլինի համապատասխան:

Արձագանքելով Պանկիսիի կիրճում տեղի ունեցած միջադեպին՝ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին դատապարտեց Պանկիսիի կիրճում ոստիկանների վրա կատարված հարձակումները եւ անընդունելի համարեց բռնի գործողությունները նրանց նկատմամբ: Նախագահը ողջունեց այն փաստը, որ կիրճի իրադրությունը հաջողվեց կայունացնել ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիայի ղեկավարությամբ:

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հետաքննություն է սկսել ապրիլի 21-ին Պանկիսիի կիրճում ոստիկանների վրա կատարված հարձակման եւ նրանց տեխնիկայի վնասման փաստերով:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՔՍԱՆ ՏԱՐԻ՝ ԳՐՔԵՐԻ ՀԵՏ ՈՒ ՆՈՒՅՆ ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

- Աննա, մի քանի՞ խոսքով պատմիր քո մասին:

- Ծնվել եմ Հայաստանի Հանրապետության Լենինական (այսօր՝ Գյումրի) քաղաքում, Քնարիկ եւ Լեւոն Դարբինյանների ընտանիքում: Հայրս աշխատում էր քաղաքի «Հանքային ջրերի» գործարանում: Մայրս, ավարտելով տեղի պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատել է քաղաքի «Հղկող հաստոցներ» գործարանի լաբորատորիայում:

Ընդունվել եւ մինչեւ 5-րդ դասարան սովորել եմ Լենինականի թիվ 16 միջնակարգ դպրոցում: Ունեցել եմ անհոգ ու երջանիկ մանկություն, մինչեւ...

...1988թ. ահասարսուռ ու աղետալի երկրաշարժը տակնուվրա արեց մեր բնական կյանքի ուղին, մեր ընտանիքի հետ, ինչպես շատ լենինականցիների, դժբախտություն պատահեց, մեր ընտանիքը անդառնալի մեծ կորուստ կրեց. երկրաշարժից դպրոցում զոհվեց 12-ամյա սիրասուն քույրիկս, եւ մեր ընտանիքը, չհաշտվելով տեղի ունեցածի հետ, թողեց մեր հարազատ քաղաքն ու տեղափոխվեց Թբիլիսի... Մինչեւ հիմա էլ, չնայած անցել է երեսունմեկ տարի, ես չեմ հաշտվում այդ կորստի հետ, ոչ ոք ու ոչինչ չի լրացնում քույրիկիս պակասը...

Ուսումս շարունակեցի Թբիլիսիի թիվ 104 դպրոցում: Ապա ընդունվեցի մայրաքաղաքի Սուլխան-Սաբա Օրբելիանու անվան մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը եւ շուտով ավարտեցի այն:

- Ինչպե՞ս, ե՞րբ եւ ո՞ւմ խորհրդով սկսեցիր աշխատել Վրաստանի խորհրդարանի ազգային (հանրային) գրադարանում:

- Համալսարանն ավարտելուց հետո, երկար ժամանակ աշխատանք էի փնտրում մեր հայկական դպրոցներում, բայց աշխատանք չգտա: Դիմեցի նաեւ «Վրաստան» թերթի խմբագրություն: Թերթի այն ժամանակվա Մշակույթի բաժնի վարիչ, լուսահոգի Բենիկ Սեյրանյանն ասաց, որ մայրաքաղաքում գտնվող հանրային գրադարանում պահանջվում են հայագետներ, եւ խորհուրդ տվեց դիմել գրադարանի տնօրինությանը:

Հաջորդ օրը գնացի Վրաստանի հանրային գրադարան, ու այդ օրը դարձավ ինձ համար ճակատագրական: Ծանոթանալուց եւ բավականին երկար զրուցելուց հետո, ինձ ընդունեցին աշխատանքի: Դա 1999 թվականին էր: Այդ օրից անցել է ուղիղ 20 տարի: Այնպես որ, այս տարի լրանում է իմ աշխատանքային գործունեության 20-ամյակը, եւ ստացվում է, որ տարին ինձ համար հոբելյանական է:

- Գործընկերներդ ընդգծեցին, որ սիրում ես քո գործը, հաճույքով կատարում ծառայողական պարտականություններդ...

- Ասեմ, որ շատ եմ սիրում իմ գործը: Երբ եկա գրադարան, երկար տարիներ հայագետ չունենալու պատճառով, գրադարանի հայկական բաժինը մնացել էր բավականին անխնամ: Դեռ սկսեցի մշակել ու դասավորել պարբերական մամուլը՝ թերթեր, ամսագրեր, հանդեսներ, ապա՝ անցա գրքերին: Շատ գրքեր անմխիթար վիճակում էին, հնացել, քրքրվել, մաշվել էին:

- Գրքերի ու ամսագրերի վիճակից դատելով՝ երեւում է, որ ընթերցողները հաճախ են դուրս գրել այս կամ այն գիրքն ու հանդեսը: Այդ առումով ի՞նչ կասես, Հանրայինի ընթերցողների մեջ հայկական գրքերի պահանջը մե՞ծ է եղել, այդ պատճառո՞վ էին նրանք անմխիթար վիճակում...

- Կարծում եմ՝ այո', նրանք շատ հաճախ են օգտվել գրադարանից: Ասեմ, որ այս գրադարանի գրքերը չի կարելի տուն տանել, այլ ընթերցողը պետք է օգտվի միայն ընթերցասրահում: Ես սկսեցի մշակել, սոսնձել ու ի մի բերել դրանք, դասավորել գրադարակների վրա՝ ըստ այբբենական կարգի ու ըստ պահանջված տեղի եւ բաժնի: Մեծ սիրով, պատասխանատվությամբ ու մեծ հաճույքով եմ կատարում իմ աշխատանքը, ինձ տրված հանձնարարությունները: Աշխատում եմ օգնել եւ բավարարել իմ օգնության կարիքն ունեցողների, գրադարանից օգտվել ցանկացողների խնդրանքը:

- Խորհրդարանի ազգային գրադարանում քանի՞ հազար կտոր հայալեզու գիրք է պահվում, եւ ինչպիսի՞ գրքեր կան: Ի՞նչ հին հանդեսներ (19-20-րդ դարերի) եւ թերթեր ու պարբերականներ են պահվում գրադարանում, ունե՞ք «Վրաստան» թերթի 1920 թվականի դեկտեմբերին լույս ընծայված «Կարմիր աստղի» համարներից:



Երբեմն, մտածում ես, թե ի՞նչ կլիներ մարդկանց վիճակը, եթե չլիներին գրադարաններն ու գրապահոցները: Որեւէ պետք եկած գիրք կամ հոդված, հետաքրքիր փաստ գտնելու համար, մարդիկ դիմում են գրադարաններին, գտնում համապատասխան աղբյուրը եւ օգտվում դրանցից: Եթե ինքդ չես կարողանում գտնել, այդ դեպքում դիմում ես գրադարանում աշխատողին, ով ավելի լավ գիտի, թե տվյալ գիրքը կա՞ կամ չկա, ո՞ր գրադարակում է պահվում տվյալ գիրքը, նյութը, պարբերական մամուլը եւ այլն:

Հետաքրքիր աշխատանք է գրադարանավարի աշխատանքը, առանձնապես հանրային գրադարանի աշխատանքը, որտեղ պահված են միլիոնավոր գրքեր ու տարբեր պարբերականներ: Նշենք, որ այս գրադարանը, որը գտնվում է մայրաքաղաքի կենտրոնում, Ռուսթավելու պողոտայի զուգահեռ փողոցում, բացվել է 1846 թվականին, ամենահին գրադարաններից մեկն է Հարավային Կովկասում: Մինչեւ 2001 թվականը հայտնի էր «Թիֆլիսի հանրապետական հանրային գրադարան» անվամբ:

Վերջերս պետք եկած համապատասխան գրականության համար, դիմեցինք Վրաստանի խորհրդարանի ազգային (հանրային) գրադարանի հայկական բաժնի աշխատող Աննա Դարբինյանին, ով մեծ սիրով օգնեց մեզ, ապա որոշեցինք հարցազրույց անցկացնել նրա հետ՝ նաեւ ճշտելու ընդհանուր գրքերի ու հայալեզու գրքերի ու պարբերականների քանակը:

- Գրադարանում կան 15-20 հազար հայալեզու գեղարվեստական, վավերագրական գրքեր, ինչպես նաեւ 200-ից ավելի տարբեր անվանումներով թերթեր ու պարբերականներ: Այստեղ պահվում են հայ եւ վրաց դասականների 19-րդ եւ 20-րդ դարերի գրքեր, բազմաթիվ հատորներ, դասագրքեր, ֆիզիկային, մաթեմատիկային, քիմիային եւ այլ գիտություններին նվիրված աշխատություններ:

Ասեմ, որ Վրաստանի ազգային գրադարանի հայկական բաժնում (եւ ոչ միայն հայկական բաժնում) շատ հազվագյուտ ու արժեքավոր գրքեր կան, որոնց հետ ես վարվում եմ՝ որպես իմ լավ բարեկամների: Չէ՞ որ գիրքն է մարդու իսկական բարեկամը, եւ գրքերից կարելի է քաղել համապատասխան գիտելիքներ ու գրքերից սովորել՝ լրացնելով չիմացածդ եւ բաց թողածդ: Մեզ մոտ պահվում են ե'ւ «Մշակ» թերթի, ե'ւ «Կարմիր աստղի», ե'ւ այլ պարբերականների ու հանդեսների համարներ:

- Ընդհանրապես, գրադարանում քանի՞ միլիոն գիրք է պահվում, եւ այդ քանակով մեր խորհրդարանի գրադարանը ո՞ր տեղն է զբաղեցնում: Գոյություն ուներ լավ ավանդույթ՝ գրքերի փոխանակում Հայաստանի հետ, այդ կապերը կա՞ն այսօր:

- Գրադարանում, ընդհանրապես, կա մոտ 5 մլն-ից ավելի գիրք: Հարավային Կովկասում այն գրավում է առաջին տեղը: Հայաստանի հետ կապը պահպանվում է: Այդ կապը պահում ենք փոստով: Մենք նրանց ենք առաքում մեզ մոտ հրատարակված տարբեր բնույթի գրքեր, նրանք՝ մեզ:

- Գիտենք, որ գրադարանում աշխատում են փորձված մասնագետ-գրադարանավարներ, օրինակ՝ Քեթեւան Օթարաշվիլին: Ձեր գրադարանի փոխտնօրեն Լեւան Թաքթաքիշվիլին հաճախ է հանդես գալիս վրացական մամուլում...

- Գիտեմ, որ Լեւան Թաքթաքիշվիլին եւ մեր տնօրեն, երկրում հայտնի գրականագետ եւ բանասեր Գիորգի Կեկելիձեն «Վրաստան» թերթի խմբագիր պարոն Վան Բայբուրթյանի հետ լավ ու մտերիմ ընկերներ են...

- Մեր սերնդակից ընթերցողները, որոնք սովորում կամ հյուրընկալվում էին Թբիլիսիում, շատերը մշտապես, եթե ոչ ամեն օր, ապա շատ հաճախ գալիս էին գրադարան: Այսօր կա՞ն երեւանյան ընթերցողներ, ովքե՞ր են...

- Հիմա էլ գալիս են Հայաստանից, բայց, իհարկե, շատ ավելի քիչ թվով...

- Ինչպիսի՞ն է վրաց լեզվի քո իմացության մակարդակը, եւ որո՞նք են պետական լեզուն սովորելու դրական կողմերը:

- Վրաց լեզվին տիրապետում եմ բավարար չափով: Լեզվին տիրապետելու համար հարկավոր է շփում, փորձ: Իմ ամենօրյա շփումը վրացերենն է: Իսկ ես ազատ կարողանում եմ շփվել գործընկերներիս, շրջապատիս մարդկանց հետ: Շատ եմ սիրում իմ մայրենի լեզուն, բայց պակաս չեմ սիրում նաեւ վրացերենը, այն իմ երկրորդ մայրենին է: Երբ տիրապետում ես լեզվին, ինտեգրվում հասարակությանը, դառնում ես նրա լիարժեք մի մասնիկը: Սիրում եւ հարգում եմ գործընկերներիս: Նրանք շատ ջերմ են, բարյացակամ: Նրանց շրջապատում ես ինձ օտար չեմ զգում: Իսկ այդ սերն ու հարգանքը փոխադարձ են:

- Ո՞րն է քո հոբբին: Ազատ ժամանակդ ինչո՞վ ես զբաղվում:

- Ունեմ սիրված, համերաշխ ու գեղեցիկ, հայկական ավանդույթներով ընտանիք: Ամուսինս՝ Աշոտ Մանուկյանը, ավարտել է Երեւանի մեքենաշինական տեխնիկումը, բայց աշխատում է ոչ իր մասնագիտությամբ: Երկու սիրասուն բալիկների մայր եմ: Նրանք սովորում են Թբիլիսիի հանրային թիվ 104 հայկական դպրոցում: Դուստրս՝ Մարիաննան, 14 տարեկան է, 9-րդ դասարանցի: 10-ամյա որդիս՝ Գեորգին, չորրորդ դասարանում է: Սիրում եմ հիմնականում ընտանիքիս հետ անցկացնել ազատ ժամանակս: Զբաղվում եմ եւ ինքնակրթությամբ:

- Ի՞նչ խորհուրդ կտաս մեր ընթերցողներին, հատկապես՝ երիտասարդներին:

- Մեր ընթերցողներին, հատկապես՝ երիտասարդներին, խորհուրդ կտայի սիրել մեր ոսկեղենիկ հայերենը, որը շատ գեղեցիկ ու հարուստ լեզու է: Բայց եւ սովորել վրացերենը եւ այլ լեզուներ:

Հիշեցնելով ռուս մեծ գրող Վալերի Բրյուսովի խոսքերը՝ «Հայերենը բոլոր լեզուների անծանոթ գեղուհին է», ցանկանում եմ խորհուրդ տալ՝ զավակներին բերել հայկական դպրոց, որ ծանոթանան այդ «անծանոթ գեղուհուն», սիրեն ու սովորեն հայերենը, որը Մեծն Թումանյանի լեզուն է, Նարեկացու եւ Քուչակի...

Ու խորհուրդ կտայի նաեւ լավ սովորել մեր պետական լեզուն՝ վրացերենը, որը Մեծն Շոթայի, Ծերեթելու, Իլիայի լեզուն է, Գրիշաշվիլու, Տաբիձեի, Իմեդաշվիլու եւ մյուս վրաց մեծերի լեզուն: Որովհետեւ, նախ՝ «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես», ու նաեւ վրացերենը մեր երկրորդ մայրենի լեզուն է: Սովորելով վրաց լեզուն՝ ճանապարհ ես հարթում քեզ համար դեպի բարձունքներ, ինտեգրվում շրջապատիդ, քայլում քո ապագան տանող ճանապարհով:

- Շնորհակալություն հարցազրույցի համար:

Զրուցեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՏԱՔՍԻՆԵՐԻ ԳՈՒՅՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՔԻՄՄԱՔՐՄԱՆ ՎԱՈՒՉԵՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, տաքսիների մոտ 1500 սեփականատիրոջ համար գույնը փոխելու եւ քիմիական մաքրման վաուչերների բաժանման ժամկետը երկարաձգվել է:

Քաղաքապետի խոսքով, վարորդներին հնարավորություն է տրվում մայիսի 1-15-ը, համապատասխան ընկերությանը դիմել taxi.tbilisi.gov.ge կայքում նշված ցանկացած հասցեով:

- Տաքսիների բարեփոխումը, որը իրականացվում է մայրաքաղաքում, տրանսպորտային քաղաքականության շատ կարեւոր ուղղություն է: Բարեփոխմանը զուգահեռ, մենք շարունակում ենք կապ պահպանել վարորդների հետ: Հատուկ նախաձեռնողական խմբի հետ, որը ստեղծվել է վարորդների կողմից, ունենք սերտ համագործակցություն: Մենք պայմանավորվել ենք, որ տրանսպորտային միջոցները, որոնք համապատասխանում են նշված չափանիշներին, տեխզննում անցնելուց հետո, կարող են դիմել համապատասխան ընկերություններ, ներկելու եւ քիմիական մաքրման վաուչերներ ստանալու համար,- հայտարարեց Կախա Կալաձեն:

Նրա խոսքով, հաղորդակցության շրջանակներում, հայտնաբերվել է, որ տաքսիների որոշ վարորդներ, տարբեր պատճառներից ելնելով, չեն դիմել ընկերություններին:

Կախա Կալաձեի հայտարարությամբ, տաքսիների մոտ 1500 վարորդի համար այդ հիմնախնդիրը կլուծվի:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ